

Աւրախութենից մաղն է երկենանում, տրտմութենից եղունգը:

Հաւանածդք քարը աչք կհանէ:

Հղարները ընդուր է յայտնի, որ քարի մեջին ես վաղում:

Հփոքած ձիու ետելցը մի՛ անցնիլ:

Պատիցը ընկնողը, պատիցը ընկնողի հալիցը (որպիսութիւն) կհասկանաց:

Պահէ դարմանը, կկայ ժամանակը:

Պառ կած շանը քար մի՛ քցիր:

Պարապ մնալուցը դատարկ աշխատիլը լաւ է:

Պարտքը հազարին հասաւ, հաւի միս է ուտելու:

Պարտք չունիս՝ զնա երաշխաւոր եղիր. գործ չունիս՝ վկայ եղիր:

Քաղացպանը ալիւրոտ կլինի:

Քուրը զնումէ, աւազն է մնում:

Քրի շատ զալը կտրելու նշան է:

Սատկած կովը կաթնոտ կլինի:

Սատանի խկիրայ տունն է մնոնի էլ դուրս էլ դայ:

Սար ու ձոր նորա համար մէկ է:

Սէյր անօղնն (զիտող) զիւրին կմուի:

Սիմ սիմ սիմառն:

Սոխ չեմ կերել, որ սիրս կսկծէ:

Սոլածին խղճնոտնը չի լինիլ:

Սուրբ Աստուած չէ երեք անգամ կրկնեմ:

Ստախօսի շահն այն է, որ ուղիղ էլ ասէ չնն հաւատում:

Սրտի սիրածը զեղեցիկ է աշխարհքումը:

Սև ձումը կասեն զեղէ, որին կօգնէ՝ որին չի օդնում:

Վաղ վերկենողի զսմաթը (բաղզ) երկու է, ուշ վերկենողինը մէկ:

Վաճառականը որ կոտր ընկնի, հին զաւուարներն (տետրակ, մատեան) է քրբքում:

Վատ լեզուն ածելիցը սուր է:

Վատ խօսք՝ չանցկացած փողը՝ իրանց տիրոջն են:

Վատ տղայն գետնիցը ցախ է ժողվում, այլոց օջախն (կրակատան) է վառում:

Վարձ չի ստանար, պարապ էլ չի մնար:

Վերի արտի ցորե՞ն ես:

Տարի կայ՝ աւուրն է պահում, որ կայ տարվանը:

Տոնը չկայ թանաջուր, ինքը կփայ աբեաբուռ (զոռող):

Տեսաւ՝ հանակ շտեսաւ՝ գեօրշակ (գուցէ իրաւ.)
Տօն չէ զատիկ չէ, խեն հազեր է շար—շաղիկ:
Տիրոջը փողն է զնում, ծառայի հողին է գուրս դալում:

Տօնօն ովկ՝ ձին ովկ, գայլը ովկ՝ թէկամախոը (պարզալ) ովկ:

Տշամարդ եղիր՝ դլուխ պատոիր:

Տունը թէկ վառուաւ, մկներին էլ շմաց:

Ցաւը քաշողը դիտէ:

Երաքանչիւր վեասը իրատ է մարդոց, ոչ դասն պակասում՝ ոչ իրատը:

Փախած ձուկը մեծ կլինի:

Փախիր՝ որ պլծնես:

Փարէմ (մի ստակ) տուինք խօսեցուցնք, երկու կուտանք ձէնը չի՛ կտրիր

Փնտուած զգտածդ էր:

Փնտուէ, որ գտնես:

Փողը զնաց, բայց մաղն (ապրանք) էլ մալ եղաւ:

Փողը ձայն կտայ:

Փողը չատու, հաճու (մահտեսի) ձամբէն չըլունուաւ:

Քամին ապատածիցն ի՞նչ կտանի:

Քանին քամին տարել է:

Քեռելինն ասաւ, որդի՛ գտակդ ինչո՞ւ է ծակ. պատասխանեց՝ զրուստ (ուղիղ) խօսալուցն է:

Քիշ էի՞ ը, զա էլ եկաւ աւելի:

Քիշ էին մնել գոնից, մէկն էլ ընկաւ երթը քից:

Քունը անուշ է:

Քառասուն զողը մի մերկին չե՞ն կարացել կողոպտել:

Քեաստանիցն (շագանակ, շապալուտ) է եղիր՝ կեղին է մշանայ զնում:

Օչով (ոչ ոք) թուղ չպարձենայ:

Օրը զայ՝ բարին հետը:

Օր է՝ կանցնի:

Օր լինի՝ որ մեր փողոցումն էլ տօն լինի:

Յանձնական կազմակերպություն

Կամաց բարձր առաջնական վարչություն

Ակադեմիան պատրաստություն կազմակերպություն

(*) Գիւմրիի բառը կրծատուած է. Գումարի. բարից, որովհետեւ ու եղած է զօրոց գումարման

ցել է բնակիչ ։ ։ ։ չափ տուն. 1829 թուին՝ երր
Ռուսաց Տէրութիւնը տիրել է Տաճկաստանի Կարս
և Էրզրում քաղաքներին, շատերն այնտեղի բնաշ-
կիչներից գաղթելով՝ 1830 թուին եկել բնակել
են պյատեղ, և օր ըստ օրէ կանոնաւորելով՝ գարձ-
րել են քաղաքի կերպի՝ շինեղով կրպակներ, պան-
դոկներ, տներ և լուսաւոր համար հիմքը անու-
ղութեալ տներին Ռուսաց արժանացիշատակ
հանգուցեալ նիկողայոսի Ա. օծել են ամրոցի
հիմքը, անուանել են յայնժամ "Ալեքսանդրա-
պոլ", աւելացել են պյատեղ օր ըստ օրէ Տաճկաս-
տանի Բայազիտ քաղաքիցը գաղթականները։
Սա գտանվումէ սահմանազուխ քաղաք Ռուսաս-
տանի և Տաճկաստանի. որոնք բաժանումէ մի-
մեանցից Գարեգիտ (Արփաչայ) գետը, որ սկսվում
է Օրմիւլի և Դաղանչի գիւղերի մօտերից, խառ-
նըվում է Կարսայ գետի հետ Տաւշանդշախ գիւ-
ղի մօտ, որ ասվում է միասին "Անուրեան գետ",
իրրե թէ աւուր չափ ճանապարհ հանդարտ ա-
լիքներով համրուրում է աւերուած Շնույց քայ-
քայուած շենքերը, և Խերքակի գիւղի մօտ թափ-
վում է Երասիի մէջ։

Սա գաւառներից մինն է Երևանաց նահանգի՝
Երկուս բաժանուած՝ Շիրակ (Շեորագեալ) և Բաշ-
բակաձոր, որոնք կ'բաղկացնեն մատ 145 գիւղեր*).

տեղ Գագիկ Աբրայի ժամանակում, որ նստում էր
Անի քաղաքումը։

(*) Այս դիւդերումը կանոնաւոր ուսումնարաններ
էլ կամ, բայց ի Բամբակոց, Նոր-Դարաբիլիսուցը, և
Հառիմոյ վանիքիցը. այս յիարքին մէջ շարունակվում
է միայն Հայերէն լիզու, եւ այն մմուան ժամանակին,
երբ հողադրծների պարապ ժամանակներն են լի-
նում. ուրիշ տեղանքում կան թէեւ շինուած ու-
սումնարաններ, միայն շատ մասնաւոր քայլ տնին-
իսկ մնացած շատերն ամայի մնացած երբէք մարդի
երես չին տեսնում տարիներով, որովհետեւ նրանց
կառուցման պատճառ լինու անձնիքը անմանական
պատույ նպատակաւ են արած, եւ ոչ հայրենասէր
ուգուվ կամ պային գիւղութեան լոյս մատակարարե-
լու մորով կամ ճանաչողութեամբ, եւ այնպիսին մեռք
թերելուց կամ քիթերելուց դինի, այլ եւս հարկաւո-
րութիւն չեն զդացել իսկ իցէ թէ մի որեւիցէ ազդե-

ունի բնակիչ 2600 ծխական տուն ըստ աշխար-
հազրական տումարի, որը կազմուած է 1859
թուին, Բնակվում են պյատեղ Հայք, Ռուսք,
Յոյնք, Հայ—Կամոլիկք, Տաճիկք և Հրէայք.
իսկ օտար ազգերիցն էլ երթեւեկողներն անպա-
կաս են. կան թէեւ սորա աշխարհազրութեան մէջ
զրուած Մալականներիցն 25ի չափ տուն. միայն
նոքա բնակվումն քաղաքիցը բացակայ հեռի զիւ-
ղօրայքում Տիփիսու նահանգի խրեանց կենցա-
զավարութեան թէեւեւութեան համար. Ամրոցը
կառուցուած է քաղաքի արևմտեան կողմը՝ տա-
փարակ տեղւոյ վրայ՝ գեղեցիկ յարմարաւոր շին-
ուածքներով. Ունի շրջակայքումը իրան և ամրո-
ցին պատկանեալ հողեր արօտի և ցանելու*). ա-
նուշահամ և առատահոս աղբիւրներ և փորած
քրհորներ շատ կան. օդն ձմեռն ցուրտ է լինում
և ձիւնարեր, գարունն անձրեալի և առողջարար,
ամառն բարեխսառն և զուարթարար՝ և երբեմն
հողմուտ, և աշնան սկիզբն առողջարար և զուարթ,

ցորդութեամբ նոքա վերականգնուան ստանալու լի-
նին, կրկին գիւղական հասարակութեան մի քանի
առաջաւորների անհամաժայնութեամբ շուտով խան-
գարումն կրատանան. ըստ որում խրաբանչիւրն ու-
զումէ որ միւսերին էլ իր կամբովը վարէ, եւ վեր-
ջապէս ամինը իր ասածն անկու համար կրկին
քանդումն, կրկին աւերը կը յառաջանին, եւ այդպէս
կանցնեն օրեր, տարիներ, եւ իրանը այնպէս կըմնան
ինչպէս էին։

(*) Այս քաղաքական հողերը զործադրում էին
ցարդ իրեանց շահաւէտու թեան համար քաղաքի
բնիկ եւ նորանեկ ժողովու րիներից մօտ 360 տուն,
բոլորովին զրկելով նրանց օգտաէտութիւններիցը
քաղաքի առեւտրական եւ արնեստական դասերին.
այս վերջինները նանաչելով իրեանց եւ նոցա միա-
կերպ իրաւունք ունիլը նոյն քաղաքական հողերի
վրայ, 1863 թուին գատողական վճիռ կազմեցին, առ-
աջարկեցին իշխանութեան բարեսեսութեանը։
1868 թուին իշխանութեան կողմից կարգուած հո-
ղաչափը այդ հողերը նկեց չափի տակ, եւ ի վերջու
բարձրագոյն իշխանութե, ենը ճանաչեցրաց՝ 'բոլորին
հաւասարապէս իրաւատէր լինիլը. բայց զործերը
եւ մակերեւոյթը դեռ դուրս չեն եկած հաստատուած։

իսկ վերջին ցրտոտ. Հոդին բարեկեր է, ցորեան առատ և շատ ընտիր, գարին՝ աճառն՝ ձեմն առատ և սապն միջակ. ուստի և այստեղի կենցաղավարութիւնն թեմեւ է լինում: Հարաւային կողմըն են անկանում բօստաններն, որ տեղերանքում բուժնում են սոխ, թարղուն, մազատանոս, համեմ, քալամ, խիար, գրում, բաղուկ և լին և լորինչ հարկաւորն են տնական պիտոյքների. ձմերուկն աշաս է լինում: Սովորական է այստեղ տնկելն ուռենիներ, բարտիներ. իսկ մրգաբեր ծառներից տնկում են թէե շատ սակաւ տեղանքում, բայց՝ մասնաւորապէս պտղատու լինում են խնձորենին, ծիրանին, ալաջահրէն, չիւսիսային կողմն են սեաւ և կարմիր քարերի հանկերն. շատ կարմիր քարերն բերվում են զբլխաւոր շինութիւնների համար մերձակայ Դարբանդ՝ Նրավալպի և Պանդիմայ զիւղերից. կակուդ են այն քարերն, և բոլոր շինութիւններն քաղաքի սրանցից են, և այս պատճառաւ է՝ որ քաղաքի տեսքը տխուր է. այն քարահանքների հետ մի է համարվում և քարհանքն Խաչ—քարի*). չ'կան այս տեղ աւելի զբանակու տեղեր. միայն քաղաքի Նրեմուեան կողմը ամրոցի մօտ "Զարքաղի-ձոր" անուանուլ զբանարան (Бульваръ), որը կանոնաւորուած է զանազան ծառներով, աւազաններով, սառն աղբիւրներով, գեղեցիկ զնացքներով և նատարաններով **). Կան եօթն եկեղեցիր, մէկ Ռուսաց,

(*) Խաչքարն է հինորեայ առերակ շինք Հայոց, սակաւ ինչ հետի Գարեգիս դեմուցը, ապատաժի տակ. շինքերն կողմանուած են ուխումին:

(**) 1867 Թուին տեղւոյ ամրոցապահ զօրբերից
աշխատաւոր զնդից այնուեղ գետինը փորելիս չըի
զնացք շինելու համար, գտնումնն վետնի տակից
կոփածոյ քարեր. բաց են անում, և դուքս է գալիս
մի փոքր եկեղեցի պարսպապատ. բացվում են խո-
րաններն եւ սեղանատեղին, եւ գտնվումնն հօին
գերեզմաններ. որոնցից մէկի վերայ կան զրեր նըշ-
մարիչ, մաշուած եւ կոտրտուած. այդ գերեզմա-
նագիրը շատերը աշխատած էին կարդալու, եւ զա-
պան բաների վրա մոռերը դարձնում էին. զնա-

որ գտանվում է ամրոցի միջին, մեկ Յունաց՝ քաղաքի մեջ տեղը շինուած, չորս Հայոց՝ որոց երկուսն էին են և երկուսն նորաշեն և զեռ անաւարտ (նո՞ւ*), և մեկ Հայ – Կամլողիկների. կայ մի գաւառական ուսումնարան արքունի հաշուով Ռուս, Հայ, Յոյն և Լատին լեզուների, որոյ ուսումնաւարտ աշակերտները ստանում են վկայագիր (Аттестатъ) ստորագրութեամբ ուսուցիչների. կայ Հայոց, մի Հոգևոր ուսումնարան. սա կառավարվում է սուրբ Աստուածածնի հօմն վիրաց հրաշագործ պատկերի արդիւնքովը, որ ըստ աւանդութեան՝ նկարուած է սրբազնի Վուկաս Աւետարանչիցը. այն ուսումնարանը շարունակվում է 1839 թուից. պտուղներ տուած է համաձայն ժամանակներին՝ և գերապատիւ հոգևորական Յաջորդների և քաղաքական

ցի մի օր եւ եւ, եւ բառականին նուրբ ճետարք բրութիամբ որոշեցի, որ դրւած էր այսպէս.

Այսպիսի փլատակներով շատ հարուստ է Հայա-
տանը. եւ դորա համար է, որ ճանապարհորդի աչ-
քիրը ընդարձակութեան վերայ գառնապիս պատկերա-
նումն հանդէպը տիսուր աւերակներ եկեղեցիների,
եւ կիսակործան շքեղարուեստ շինութիւններ մե-
նաստանների. նոքա իւրեանց միզը եւ կարողու-
թիւնը զոհել են նրանց կառուցման համար, եւ կար-
ծես երկնից թռչուններին պատսպարաններ շինելու
միայն ինքեանք էին մնացած, թողնելով այն, ինչ որ
ամենակարեւորն էր ազգային կեանքին, որը մի-
ութեան, յարատևութեան եւ բարօրութեանը:

*¹) Կորաշըն աւագ եկեղեցին Հայոց շինվում է Անի քաղաքի Աւագ եկեղեցւոյ նմանութեամբը, զեղեցիկ բանդակագործութիւններով և նկարներով. զորա ներքին և արտաքին շինութեանց վերացարդ մեծագումար դրամ ծախս եղած է, և յիրաւի երեւի շինք է, որը և գուրս է Աղէքսանդրապոլսոց կարողութիւններու.

Հոգաբարձուների հոգատարութիւններին. ժամանակը իրայ հնութեան և նորօգութեան հետ զանազան փոփոխութիւնների է ննջարկում մարդկութեան վիճակը. այս ուսումնարանը երրեմն ըստ մասին պողատու եղած է, և երրեմն անպոտող. Հոգաբարձութիւնը աչք չէ գարձրեր շատ անգամ սորա ներքին և արտաքին կանոնաւորութիւնների վերայ. նրանց մեջ շատ անգամ յուղլիլ են զանազան միմեանց հակառակ խնդիրներ. Հոգաբարձութիւնը սորա նիւթական կարողութեան վերայ երրեմն շատ անհոգ լինելու պատճառաւ. ծառայել է նա ոմանց միմիայն անձնական օգուտներին. և այսպիսի գէպքերում Աղէքսանդրապօլու հասարակութիւնը իրանց պարտքը երբէք չէ ճանաչել. նա իւր հետաքրքրութիւնը չէ ուղղել այս առարկայի ընչութեանը, որպիսութեանը և վարչութեանը վերայ. և գորա համար է որ արժանաւորի փառքը և անարժանի անարգանքը միամին ննջում են մի անկողնոյ տակ. Հոգաբարձութիւնը անցեալ 1869 թուին կրկին վերանորոգվեցաւ Վեհափառ Կաթողիկոսի հաստատութեամբը, և երեւում են որ ըստ օրէ նրանց աշխատանքների պտուղները. Ի հարկէ կը ջանան նրանք գէպ ի լաւը քայլափոխեցնել. տայ Աստուած յաջողութիւն նրանց, և հասարակութեանը ուսումնասիրական ողի, որ գոնէ ստիպուած ժամանակի պահանջեցը, և օրինակուած մերձակայքաղաքների յառաջարկմութիւններիցը՝ հասկանան իւրեանց մարդկացին արդար պարտականութիւնները*):

(Մատուցեած է Հեղափառութեան)

ԲԻՒԶԱՆԴԵԱՆ ՍՈՒՐՃԱՆԴԱԿ

Քիլիսէն մեղ զրուած նամակ մը զարմանք կը յայտնէ լրագրաց ոմանց մեջ անցեալներն հրատակուած այն լուրին վրայ, որ կը ծանուած մերձակայքաղաքների յառաջարկմութիւններիցը՝ հասկանան իւրեանց մարդկացին արդար պարտականութիւնները*):

*) Այս նիւթի վերայ ընդարձակօրէն խօսելս աւելորդ համարեցի, որովհետեւ ինչպէս նկատում եմ՝ սա օր ըստ օրէ արձակ նիւթ կդառնայ Աղէքսանդրապօլու նորահաս երիտասարդների գրիչներին, ուստի եւ հանդամանարար կայնրդուին նորա անցեալը, ներկային եւ ապագայն.

թէ Գաւիթ ներշապուհ անուն անարժան վարդապետը Աստանայէն և ուրիշ տեղերէ զատ Պէտէնէն ալ բազմաթիւ տուներ Պատականութեան գարձունելու ստորագրութիւն առեր է:

Այս անհիմն լուրը, կըսէ նամակագիրը, չնեք զիտեր որ աղբիւներէ քաղած են լրազիրք. Մեր Գեր. Առաջնորդը (Հալէպու Ս. Մկրտիչ Ազքեւպիսկոպոսը) Յօնանու պէս ի քուն թմրած չէ: Իր վիճակներն անայցելու ձգած չէ. թէ յեղեսիա, թէ ի Մարաշ, թէ յ՛նտիոր, և թէ ուրիշ մանր մունր վիճակներ եկեղեցական և աշխարհական քննիչներ ու այցելուներ զրկելէ դազրած չէ: Պէտէնու ազգայնոց հետ ալ զրաւոր հաղորդակցութեան մեջ է միշտ, և այս օրերս Պատրիարքարանէն իրրեւ օգնական զրկուող Արժ. Յակոբ և Եղիշէ վարդապետներն ալ Պէտէն հանդիպած և հօն օր մ'ալ կեցած ըլլալով այսպիսի բան մը տեսած ու լսած չեն:

Արդարեւ Կիլիկյ վիճակներուն մեջ արմատացած կրօնական բարոյական և քաղաքական անթիւ զեղծումներն անուրանալի են, բայց մեր Գեր. Առաջնորդին ինամոց յանձնուած վիճակայնոց վրայ ամենայն հոգատարութեամբ հսկելու փշըմն ալ զրուանի տակ ծածկել անհնար է: Եթէ իրենցաւ պատճառող բան մը կայ, այս է թէ Հալէպի Վիլայէթին ենթարկեալ քաղաքական պաշտօնատարները տակաւին յիսուն վաթուն տարի առաջ գործածուած հին գիրքը բռնած են. ծեծ, բանտ, անկանոն և զրեմէ բռնի հաւատակիութիւններ և այն պակաս չեն. Ասկէց զատ Հայերը նուաստ զիրք մը ունին, իսկ պատականք աւելի և համարում կը վայելնեն, և ինչ ինդիր որ ունենան՝ իսկցին կը կատարուի: Գեր. Առաջնորդին այս իրութեանց վրայ ընդարձակ տեղեկագիրներ զրած է ի Պատրիարքարան, որոնցմէ կրնաք պէտք եղածները քաղել, և եթէ արժան դատիք՝ պատւական լրազրոյդ միջոցաւ հրատարակել ։

Մասկ թ. 1028. դէկտ. 2-

Պ. ԱՍԿԱՆԵԱՆ

Լրագիր ընթերցողները զիտեն թէ Ամերիկայի հայ զաղթականութեան մեջ նշանաւոր ազգային